ընկալան, և յաժմս ոմն ովսէփ անուն արքեպիսկոպոս եկաւ վասն նոյն խնդրքի, եկաւ այս մօտ որերս ձեռնադրութիւն պիտի անէ քօլէճի տղոց. ինքն մին հեզահոգի և հանդարտ բնութեամբ անձ է, եղէսու Արքեպիսկոպոս է։ (Պատկերահան Յովհաննէս առ Մելգոնեան, 1750 դեկտ. 6. [Հռովմ])։

ՃԻԸ.

Ուրախ լեր, զի ստացաք զնշգրիտ գաղափար հայկական արարողութեանց և ըստ այնմ յաջողեցաւ առնել զձայնաւորն... եղև չինութիւն և ուրախութիւն ամենեցուն, ընդ որ հիանան իտալացիքս լցեալ զմայլմամբ և ջերմեռանդութեամբ։ Եւ եղև սկիզբն սորա ի սուրբ ստեփաննոսի նախավկայի տօնին, և ի տօնի սրբոյն անտօնի աբբային, ևս քան զևս փառաւորագոյն մատուցաք զնոյն, առաջակայութեամբ և կայթմամբ և սրտատրոփ ցնծութեամբ Մինաս վարդապետին, Սարգիս վարդապետին և մեծամեծ հայոց քաղաքիս, և անհամար բազմութեան իտալացւոց խոնելոց յաղագս Անտօնեան տօնին։ Եւ մինաս վարդապետն ցնծալից սրտիւ ընծայեաց մեզ զմեծագին շուրջառ իւր, ընդ նմա և զվակասն և զեմիփորոնն և զարծաթի կամարն հանդերձ ամենայն կազմածովքն։ (Մելգոնեան առ Հ. Զաքարիա վրդ., 1751 մարտի 19. Վենետիկ)։

ՃԻԲ.

Զարարողութիւնս պատարագի որպէս զձայնաւորինն, նոյնպէս և զթուոյն ամենայնիւ հոգացաք լինիլ ըստ հայկական ծիսի. և վաղու ևս սկսեալ եմք վարիլ նովաւ, մեծաւ խաղաղութեամբ և հաճոյ թուելով ամենայնից, եթէ հայոց, և եթէ իտալացւոց։ Նոյնպէս և ի զգեստս ձայնաւորին վարիմք ամենայնիւ ըստ հայկականին մինչև ցսաղաւարտն ևս։ Ուստի եթէ իցէ ոք, որ կամիցի շուրջառ չինել կազմածովք, կարէ չինել և զսաղաւարտ։ Այլ և զտօնս սրբոց և զընթերցուածս և զաւետարանս պատարագին, յօրինեալ կարգեցաք ամենայնիւ ըստ հայկականին, ի բաց քերելով զամենայն եկամուտ։ Այլ և զդասն ի մերձակայ աւուրս անցուցանեմք յառաջոյ կողմն աւագ բեմին, ի ներքս խաղացուցեալ զաւագ բեմն։ (Հ. Վրթանէս վրդ. [Ասկիրեան] Արուռակալ Մելգոնեանի առ Հ. Զաքարիա վրդ., 1751 յունիս 16. Վենետիկ)։

ՃԼ.

Քիլիս բովանդակն քանդեցաւ, քանզի վասն քիւրտի նստեալ է անդ սարը ապտրահման փաշայն, սպանանօղն զսարը պէկ օղլուն, և հանապազ ջարդէ զքիւրտս. զանթիւ զօրս սփռեալ է ի վերայ տանց քիլիսուն պահել զնոսա. և զկէսն քիլիսուն քանդեալ է ի բնակութիւն զօրաց, և ինքն բոլոր քիլիսն է իբրու մօռայ կղզին էվենէտիկու։ Զանթիւ մեծամեծս քաղաքին սպանանէ, կարծիս առեալ թէ քիւրքին կողման ջատագովք իցեն։ Զհազար քիւրտս հնարիւք մուծեալս ի քաղաքն սպան. հաշտիլ կամեցան քիւրտքն տալով զ30 քսակս արծաթոյ, սակայն ոչ կամեցաւ։ Հրաման եհան զի ոչ ոք ի զօրաց իւրոց ռամազան պահեսցէ։ (Հ. Գէորգ [Պաղտատեան] առ Մելգոնեան, 1751 Օգոստ. 8. [Պոլիս?])։

ՃԼԱ.

Վասն բազմանալոյ անձանցն, և վասն ոչ բաւելոյ մեզ գօռոյին, քակեցաք զաւաք բեմն, և յետ կոյս տարաք, և զգօռոյն առաջի սեղանոյն չինեցաք և եղև յոյժ վայելուչ, թէպէտ դեռ բոլորովին ոչ է եզերեալ։ (Մելգոնեան առ Հ. Միքայել, 1751 Օգոստ. 13. [Վենետիկ])։